

Եւ մարդկութիւն յարիցէ 'ի վիշտ 'ի վրէժ զայրացկոտ
Եւ 'ի յաճիւնս քաղաքի ինդրեսցէ զհետըս բնութեան ,
Եւ յայիք պատուարք , բայիք արդ , զարգեւական ձեր թողէք
Եւ զատաճեմ դարձ առնել 'ի դաշտավայրս զոր ելիք :

Եւ ուր կամն ես . — Հետք ջնջին . և ընդ երկիր առապար
Վիհք յառաջոյ խոչ ընդ ոտըն լինին , վիհք 'ի թիկանց .
Հաւատարիմք կան ընկերք ինձ յետուստ սրակք և պարտեզք ,
Եւ ամենայնք 'ի յետուստ նշխարք մարդկան շինուածոց .
Եւ թիւթոյ և եթ դիտեմ կոյտ , յորմէ կենաց ընծուի ծայր ,
Եւ ձեռողին ձեռին ակն ունի պազալդ անյարգար :
Ինդ քարաժեռս հերձակտուր ժողխեալ ուղիւից վիժանուտ
Եւ ինդ ընդ ծառոց արմատովք զանցին գործեն զիւրեանց հուն ,
Եւ ամենայն ինչ խրթնի և անապատ ահաւոր .
Սլացեալ արծուոյն յօդ թափուր՝ յամպոց փարի զաշխարհաւ .
Ոչ մի հողմոյ թե թեթեւ ածէ ինձ անդր 'ի բարձունս
Օ հետախաղաղ աղաղակ մարդկան ինդից կամ ցաւոց :
Եւ յեմ ըստոյդ միայնակ : — Ի գիրկ ու 'ի ծոց քո բնութիւն ,
Ի քեզ կամ ես . լոկ անուրջք զահի հարեալ տարան զիս .
Եւ ընդ կենաց մռայլ պատկերս ընդ մռայլս հովտաց հերք¹ 'ի բաց :
Սրբիկ բառնամ ես ըզկեանս 'ի սրբափայլ սեղանոյդ ,
Օ յուսապատար մանկութեան բառնամ զըւարթ քաջալերս :
Եւ ուր փոխեն 'ի մեզ կամք ըզնպատակ և ըզկարգ ,
Եւ ուր 'ի նոր կերպարան յեղափոխին և արարք .
Դու միայն միշտ մանկադէմ մշտանորոգ դու գեղով
Բզգճն բնութիւն՝ կաս պատկառ յաւիտենիցն օրինաց .
Սիշտ նոյն գորով քո պահես հաւատարիմ առ մարդիկ
Օ որ քեզ տըղայն յեղյեղուկ զոր 'րիտասարդն հաւատաց .
Ի նոյն 'ի ծոց գըթալիւր գըգուես զհասակս ամենայն :
Ինդ նովին ծրիւ կապուտաւ ու 'ի նոյն կանաչ 'ի գետին
Եւ որոց ազգաց երթեւեկք՝ մերձին ազգացն անցելոց .
Եւ արեգակն հոմերի ահա ժպտի և ըզմեօք :

ԸՆԴԵՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւ յայիք պատուարք , բայիք արդ , զարգեւական ձեր թողէք
Եւ զատաճեմ դարձ առնել 'ի դաշտավայրս զոր ելիք :

ՍԵՆԵՏԻԿ քաղաքին մէջ հայազիր
տպագրութեանց վրայ գլխաւոր աշխա-
տողներէն մէկը սեպեղու է երևանեցի
Համազասպեան (Թադէոս երէցը , Ղա

չոց Կրքին ըրած ընտիր և վայելազարդ
տպագրութեանը համար . և իրեն ար-
դիւնքը այնչափ աւելի մեծ է , որչափ
մեծ էր ձեռք զարկած գործքը թէ աշ-
խատանքին և թէ տպագրութեան պէտք
եղած ծախքին համար : Իրեն խորհրդո-
ցը և ջանից համամիտ և օգնական տես-
նելով Աղիազար կաթողիկոսը , Սպա-
հանէն ելաւ ու Գաղղիոյ Սարսիլիա
քաղաքը անցաւ , ուր որ Սկան վարդա-
պետին տպագրատունը կար , և տեսնե-
լով որ անխնամ թողուեր ու գրեթէ կոր-

¹ Տես Բազմ . հտ . Ը . երես 230 . 344 :

ծաներ է՝, Ս ենետիկ մայրաքաղաքը դարձաւ։ Հետը ունէր “Սակ զկատա-
րեալ իմն տօնացոյց (ինչպէս որ ինքը
կ'ըսէ)՝ ի գիտնոց արանց սրբապրեցեալ
և զգուշապէս գաղափարեցեալ, նոյն
պէս երկու իրեք հարստ և ձիւ ճաշոց
զրոց գաղափարներ, որոնց անմիաբա-
նութեանը և տարբերութեան ինչ դար-
ման ընելը ինքն ալ չէր գիտեր։

Իտրեաղդաթար Ս ենետիոյ մէջ
Ղաշոցի ընտիր օրինակ մը գտաւ հին
և անթերի, և անզուգական գանձ “Ս
գանձուց հնոց թագաւորացն հայոց, որ
կ'երևնայ թէ Մի քաղաքէն գաղ-
թական և Խալիոյ հարաւային կողմե-
րը սփռուած հայք հետերնին բերեր
էին։ Սէջի ընթերցուածները աստուա-
ծաշունչ գրոց հետ բաղդատեց լիա-
դէոս, և ընտիր զուգաձայնութիւնը
տեսնելով՝ աւելի սիրտ և քաջալերու-
թիւն առաւ։ Սնաց որ ամէն բանէն
հարկաւորը իրեն կը պակսէր, որ էր
դրամական ձեռնտուութիւնը։ Վասն զի
հետը ունեցածը քիչ բան էր, և անով
այնպիսի մեծ ծախքի մը դուռ բանալ
չէր ըլլար։ զի նախ նորաձոյլ տաւեր
թափել տալու էր, ու ետքը տպագրու-
թեան ձեռք զարնել։ Սյս բանիս ալ
իրեն առատամիտ օգնական և ընկեր
գտաւ Զուղայեցի Խոճայ Սահրատենց
պարոն Գասպարը, որ ինչպէս առաջ
յիշէր ենք, Պոլիս Խալիոյ տպա-
գրապետին հայերէն գրերը աւեր, և
այն ատենները նոր տպագրատուն մը
բացեր էր Ս ենետիոյ մէջ։ Լիադէոս
անոր հետ ընկերացած՝ երկու տեսակ
նոր գիր ձուլել տուաւ, խոշոր ու մանր,
վայելուչ ձևերով և ըստ բաւականին
ընտիր ախորժակով։ Սնկէ ետքը սկսաւ
տպել նախ Խորհրդատետր մը ու ետքը
Ղաշոցը, Օմիւռնիոյ արքեպիսկոպոս
Յովսէփ վարդապետին խորհրդակցու-
թեամբն ու հաւանութեամբ, որ այն

1 Գիտելու արժանի բան մը կայ որ Ռսկանայ
Եկրայրը Աւետիս, և անոնց քեռորդին Սողոմոն,
Մարտիկոյ տպագրատան աւրուելուն պատճառ
սոյն Թագէոս երէցը կը համարին, ինչպէս որ
ետքը պիտի տեսնենք։

ատենները Ս ենետիկ կը բնակէր։ Ի-
րեն գովելի աշխատասիրութեան փառ-
քը աւելի մեծ և արժանաւոր կ'ըլլար
թէ որ տպագրութեան մաքրութեանը
համեմատ ըլլար նաև ուղղագրութիւ-
նը, և երկրորդ՝ թէ որ աւելի հաւա-
տարիմ գտնուէր արքայական օրինա-
կին։ Վասն զի այն ատենները դեռ նոր
տպագրուած ըլլալով Ռսկանեան աս-
տուածաշունչը, Լիադէոս ալ Զանք ու-
նեցեր է անոր համեմատ տպագրել Ղա-
շոցին մէջ եղած ընթերցուածներն ու
աւետարանները։

Խորհրդատետր ու Ղաշոց գրերէն
զատ ուրիշ տպագրութիւն մը չըրաւ
Լիադէոս։ հաւանական կ'երևնայ թէ
ըրած ծախքին համեմատ շահ մը չտես-
նելով՝ այն գովելի աշխատասիրութե-
նէն ետ կեցեր է։ փորագրել տուած
գրերն ալ կ'երևնայ թէ օտարաց ձեռքը
անցեր են։ Վասն զի 1687ին հոլով Յով-
հաննէս վարդապետը՝ Յակովբ Սո-
րէթ թիւսուած Խալիոյ տպագրա-
պետի մը քով Պարսիստանաբու-
թիւնէն Լիադէոսին ընդդէմ դրած քիչ
յիշարդ ոմանց հայկապահեաց ըսուած գիրք
մը տպագրեր է Լիադէոսեան խոշոր բու-
լորգիր տաւերով։ — 1687ին Սահրա-
տենց Լիադէոս ըսուած ամսօրեայ մտա-
ծական գրոց առաջին տպագրութիւնը
ըրին՝ հոլովին թարգմանութեամբ,
ու թաժալ փոքր գրքով և միօրինակ մի-
ջակագիր առանց նօտր գրի։ Վերքը
յառաջաբան չունի, միայն վերջը այս
համառօտ յիշատակարանա կայ։ “Տը-
պագրեցաւ ինդրանօք Խոճայ Սահրա-
տի որդւոյ պարոն Սուրատին։”

Համազասպեան Լիադէոս երէցին
ժամանակակից է նաև ագուլեցի Գուլ-
նազարի որդի Խոճայ Սահրապետը, որ
իր տանը մէջ մասնաւոր տպարան բա-
ցաւ, և մասնաւոր գրեր ալ ձուլել տա-
լով, որոնք ինչուան այն ատենը Ս ենե-
տիկ փորագրուածներուն մէջ՝ ամենէն
աւելի վայելուչ և ընտիր կրնանք սե-
պել, 1687ին Պարսիստանաբու-
թիւնէն Լիադէոսին ընդդէմ դրած քիչ
յիշարդ ոմանց հայկապահեաց ըսուած
գիրք մը հրատարակեց, որ
նոյնպէս հոլով վարդապետին երկասի

ըութիւնն էր : Վրբին ճակատէն ետքը փայտափոր պատկեր մը կայ արևելեան զգեստով, որ նոյն ինքն Սոճայ Վահապետը կը նշանակէ . վրան ալ սաղմոսին այն խօսքը գրուած . “ Եւ ես որպէս ձիթենի պտղալից ,” և այլն . տակն ալ “ Եւ թուին Հայոց ՌՃԼԵ ,” : Վրբի յիշատակարանին մէջ, որ թարգմանչիւնը կ'երևնայ, գրուած է . “ Հիշեցէք . . . զՍոճայ Նահապետն , (որ) մեծաւ հոգաբարձութեամբ յառաջացոյց զթարգմանութիւն և զսպագրութիւն սորին , վասնելով զգոյս և զինչա բազումս 'ի ձուլումն գեղեցիկ տառիս , 'ի շինումն նորակերտ տպարանիս , 'ի գտումն պատուական թղթոյս և 'ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւորաց ,” : Տպագրութեան դիրքը հասարակ քառածալ է , երկիջեան, մէկը նեղ՝ բնագրին համար, և միւսը լայն մեկնութեան կարօտ տեղումները լուսաբանելու պատճառաւ, միօրինակ միջակապիր, տեղ տեղ ալ մանրագիր խորագրաց համար, հասարակ տպագրութեամբ :

Երոնցմէ ետքը մեր Սիւրբանութեան բարեյիշատակ հիմնադիր աստուածաբետալ Սիւրբար Թեա հայրը՝ իր ընկերներով Սոճայէն Սենեակի անցնելով, բարեպաշտից ձեռնտուութիւնը սկսաւ գրքեր հրատարակել : Երբային դպրութիւնները վերանորոգող մեծ հանձնարը լաւ իմացեր էր որ ազգը՝ կրթութեամբ ազգ կ'ըլլայ . բայց այն կրթութիւնը հաստատուան հիմն պէտք է ունենայ ուղիղ կրօնքը և ճշմարիտ աստուածաբանութիւնը, և թէ այս բանս օգտակար գրքեր ծաւալելով կ'ըլլայ, որուն պատուութիւնը մեծ ազբաստութիւն էր ազգերնուս բարոյական բարգաւաճանացը : Եւ որ համար հազիւ թէ սկսեր էր իր միաբանութիւնը ձեւացնել, յետին կարօտութիւնը բանի տեղ չգնելով, արժան սեպեց բարեպաշտից՝ իր և ընկերացը ասպրուստին համար տուած տուրքը, տոկոսեօքը ազգին դարձնել, օգտակար գրքեր տպագրելով ու ձրի կամ աժան գնով կարօտելոյ սփռելով . ուստի մէկէն Սոստանդնուարօլոյ մէջ սկը-

սաւ գրքեր հրատարակել : Եւ Սոճայ Սոճայ անցնելով, այն քիչ տարիներուն մէջ աչքը չկրցաւ բանալ, իր աշակերտացը կրթութեան հոգէն և անոնց հաստատուն բնակարան մը պատրաստելու աշխատանքէն . բայց Սոստանդնուարօլոյ անքննելի կարգաւորութեամբ հոն ալ հանգիստ չգտնելով, Սենեակի անցաւ, և ուրիշ զանազան տեղումներ փնտռած սէրն ու հիւրընկալութիւնը առաւելաւ Սենեակի փառաւոր հասարակապետութեան տեսաւ . և իր մեծ դիտաւորութեանը լիաբերան գովեստ և զարմանք և ձեռնտուութիւն գտաւ, թէ քնդաքին մէջ գտնուող Հայագիւններէն և թէ բուն Ստալացի բնակիչներէն . ու հոն տպագրած առջի գիրքը եղաւ մեծին Սիւրբարի բարոյական աստուածաբանութեան համառօտութիւնը յամի 1715 . և որովհետեւ Սիւրբանութիւնը առանձին տպարան չունէր, անոր համար քաղաքին Ստալացի տպագրապետացը քով հրատարակեցաւ թէ աս և թէ իրեն և աշակերտացը աշխատաւորութիւնները, ինչուան որ 1800^{ին} ըսկիզբները մասնաւոր տպարան ալ ունեցանք : Եւ երանաշնորհ հիմնադրին ազգային տպագրութեան վրայ ունեցած արդիւնքը՝ ամէն բարեսէր և անաչառ միտք յայտնի կը վկայեն, անոր համար խօսքերնիս երկնցընելը աւելորդ կը սեպենք :

Եւ Սիւրբար : — Եւ ատեններն որ Յովհաննէս Եւսեփային տպագրութեարուեստը ծաղկեցնելու փափաքով վառուած՝ արեւմուտք անցեր էր, Սիւրբար Սիւրբար Սիւրբարի կենսարացի Սոստանդնուարօլոյ վարդապետը, իրեն միաբանիցը աշխատակցութեամբ մանր և խոշորագիր տառից երկու տեսակ գաղափար շինեց, և անով տպագրեց յամի տեառն 1642 Սիւրբարի ժամագիրք մը և հարանց վարքը : — Եւ ամագրոց յիշատակարանին քաղուածէն կրնան իմանալ ընթերցողք տպագրողաց աշխատութեան նպատակն ու պատմութեան համառօտութիւնը . “ . . . Հանկ ելեալ կատարեցաւ տպա-

գրութի հոգեհոռաց սաղմոսացն Վաւ-
թի ընդ սմին և կարգաւորութի հասա-
րակաց աղօթից եկեղեցեաց Հայաստա-
նեայց . . . յաշխարհիս Պարսից, յար-
քայանիստ քաղաքիս ըստ գրոց Շօշ-
կոչեցելոյ, որ այժմ Սպահան արտա-
ձայնի, ի գիւղաքաղաքիս Վոր Սու-
ղայու, ընդ հովանեաւ սուրբ Բմենա-
փրկչի վանիցս, որ է մենաստան կուսա-
կրօնից բանասիրաց . . . ի վերակացու-
թեան նահանգիս ընդհանուր Պարս-
կաստանի հեզահոգի արքեպիսկոպոսի
և շնորհազարդ վարդապետի տեառն
Խաչատրի, որ է բնիկ քաղաքաւ կեսա-
րացի: Որոյ ջանիւքն և աշխատութեքն
եղև տպագրութիւնս այս ի մէջ տոհ-
միս Հայկազեան: քանզի այս ամենեւ-
ջանիկ վարդապետս Խաչատուր օր ըստ
օրէ տեսանէր զտպագրութիւնս ի մէջ
ազգացն լատինացւոյ, ցանկայր միշտ
որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեայցս:
և յարաժամ խնդրէր հնար գիւտի ա-
րուեստիս այսորիկ: Եւ իբրև ոչ գտաւ
ուստեք առ ի ընդ զփափաք ցանկու-
թեանն իւրոյ . . . սկսաւ աշխատիլ իւ-
րով միաբանական ուխտիւն, մինչ զի ի
կատար եհան զտպագրութիւնս, և սրբ-
ուեալ տարածեաց զգիրս ի մէջ Հայաս-
տանեայցս, և այլն:

Աշխատողաց գովելի ջանքն ու ար-
դիւնքը հոչակելու ատեննիս, կը ցա-
ւինք յիշեցընել թէ իրենց աշխատանա-
ցը համեմատ չեղան նորաձոյլ գրերն,
որոնք շատ տձև ու անկանոն են: Թէ-
պէտ և զարմանք ալ չէ այնպիսի քաղա-
քի մը համար, ուր որ տպագրութեան
արուեստին վերաբերեալ ձեռագէտ մը
չէր գտնուեր: Սարժես թէ աշխատող-
քն ալ իմացեր են այս բանս, անոր հա-
մար գրքին մէջ տեղ տեղ մասնաւոր յի-
շատակարաններով անյարմար անկանո-
նութեանը ներուժն կը խնդրեն, յիշե-
ցընելով թէ միայն իրենց ջանիքը պը-
տուղ սեպելու է քան թէ հնարագէտ
ճարտարութեանը: Սանաւոր կեր-
պով յիշել կ'ազգէն նաև Հովհաննէս
անուշտով վարդապետ մը՝ Որ գնացեալ
շրջի յաշխարհին լատինացւոյ, որպէս

զի ուսեալ ի նոցանէ և եկեալ ուղղե-
ցէ և հաստատեցէ զսա ի մէջ Հայաս-
տանեայց . . .

Եւ Հովհաննէս վարդապետը յամի
տեառն 1639 Բմենափրկչի վանքէն ել-
լելով արեւմուտք անցաւ, ու ամբողջ տա-
րի մը ճանապարհորդելէն ետքը Սե-
նեոսիկ հասաւ, ուր տպագրութեան ա-
րուեստին պէտք եղած տեղեկութիւն-
ները սորվելով, Հռովմ գնաց, և հոն
նոր ձեռով գրեր ձուլել տալ սկսաւ: Ետ-
քը քանի մը արուեստագէտ մարդիկ
հետն առած Խաչիոյ Բիւրուճնա կամ
Խիլոնոյ քաղաքը դարձաւ, և հոն ալ
իրեք տարի և վեց ամիս անդադար աշ-
խատելով՝ իր անունովը մասնաւոր տպա-
րան բացաւ, ու փորձի համար Սաղմո-
սարան մը տպագրեց, ու թուոն օրուան
մէջ, հազար և յիսուն օրինակ: և իր
աշխատանաց առջի պտուղը կեսարացի
Խաչատուր վարդապետին ընծայեց:
Ընք կրնար ըսել թէ ատեն անցնելէն
ետքը իրեն գրերն ինչ եղան, և թէ
արդեօք Սուղա տարուեցան, որ աւելի
հաւանական կ'երևնայ: Վասն զի կը
տեսնենք որ Սուղայի ետքի տպագրու-
թիւնները մեծ տարբերութիւն ունին
առջինին վրայ: Վստան երեսուն տարի
անցնելէն ետքը Խիլոնոյ ուրիշ զանա-
զան հայերէն տպագրութիւններ ալ ե-
ղան, բայց ոչ Հովհաննէս վարդապե-
տին, այլ Սկանեան գործարանին մէջ,
ինչպէս որ յաջորդ հատուածով պիտի
տեսնենք:

(ՄԱՅՑԱՆՆ ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՏԵՒՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Բիւն:

Հիւ ատենէն ի վեր ծանօթ էր ա-
մենուն քնաբեր խաշխաշին թմբեցու-
ցիչ և հանդարտեցուցիչ զօրութիւնը,
որուն ծաղիկը Սորփէոս չաստուծոյն
բանաստեղծներէն տրուած զարդանը-